

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՌՈՐԻՉ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ

ԺԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՈՅ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ

1978 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

ԿԱՐԴԱՑՈՒԱԾ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀ.ԱՆԴԱՄԱԿԱՆ

ԺՈՂՈՎԻՆ ԿԱՅԱՑԱԾ 27.1.1974

-0-

Մոնթրէալի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյ տարեկան ընդհ. անդամական ժողովը տեղի ունեցաւ 11 Փետրուար 1978 ին Տա- մարիս Տիգրան Գարիպեան Սրահին մէջ նախագահութեամբ Գրգեւոր Գո- վիլ Արժ- Տ. Մամիկոն Քհնյ. Ոսկանեանի:

Սոյն ժողովէն զադանի քուէարկութեամբ ծխական Խորհուրդոյ տարեկան անդամ ընտրուեցան 5 անդամներ, իրենց անունները տրուած քուէնե- րու առաւելութեան կարգով ըստ հետեւեալին՝
Պարոնայք՝ Լեւոն Գործեան, Տոքթ. Յարութիւն Արզումանեան, Միսաք Կուտսուզեան, Վահէ Զէթլի եւ Գէորգ Փելթէքեան:

Խորհուրդս իր անդրանիկ նիստին կազմեց իր ղիւանը հետեւեալ կերպով՝

- Պրն. Լեւոն Գործեան \ Ատենապետ
- Պրն. Արթօ Գասմաճեան \ Փոխ Ատենապետ
- Պրն. Առաքել Առաքելեան \ Ատենաղալիք
- Պրն. Պերժ Էսսէն \ Փոխ Ատենաղալիք
- Տոքթ. Յար. Արզումանեան \ Գանձապահ
- Պրն. Փօլ Մուրատեան \ Հաշուպահ
- Պրն. Միսաք Կուտսուզեան \ Խորհրդական
- Պրն. Գէորգ Փելթէքեան \ Խորհրդական
- Պրն. Վահէ Զէթլի \ Խորհրդական-Դիւանապետ

Օգոստոս ամսու վերջաւորութեան Խորհուրդոյ հաշուպահ Պրն. Փօլ Մուրատեան իր անձնական զբաղումներուն պատճառով ներկայացուց իր հրաժարականը, որուն պաշտօնը ստանձնեց Պրն. Մ. Կուտսուզեան:

Այս անցնող շրջանին մէջ ծխ. Խորհուրդս զումարեց 48 նիստեր: ԳԱՆԱՏԱՅԻ ԱՌԱՋ. ՓՈՒՍԱՆՈՐԴՈՒԹԻՒՆ-

Ինչպէս նախորդ տարի այս շրջանին եւս Խորհուրդս վայելեց բարձր եւ պատշաճ Գովանաւորութիւնը թեմիս Առաջ. Փոխանորդ Հոգ. Տ. Զաւէն Ծ. Վրդ. Արզումանեանի որուն ներկայութիւնը ի մասնաւորի կարեւոր թուականներուն եւ յատուկ ձեռնարկներուն, եկաւ փայլը կրկնապատկել Եկեղեցւոյ տարած աշխատանքներուն ու գործունէութեան:

ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒ

Ծխական Խորհուրդս իր խորին շնորհակալութիւնները կը յայտնէ Եկեղեցւոյ արժանաւոր եւ կորովի Գովիլ Տ. Մամիկոն Քհնյ. Ոսկանեանին որ իր կրօնասէր ծառայութեամբ զոհացում կուտայ մեր բարե- պաշտ ժողովուրդին: Տէր Հայրը ամբողջ տարին ջանաց այցելել եւ քաջալերել հիւանդներ եւ տկարներ, որոնք կը գտնուէին քաղաքիս զանազան հիւանդանոցներուն մէջ: Մեր ծուխի բազմաթիւ տունները այցելելով ջանաց իր պարտականութիւնները կատարել հանդէպ իր ժողովուրդին:

ԴԻՒԱՆԱՏՈՒՆ

Ծխական Խորհուրդոյ տեղին կարգադրութեամբ ղիւանապետի պաշտօնը վստահուեցաւ Խորհուրդոյ անդամներէն Պրն. Վահէ Զէթլիի որ

բաց պահեց Եկեղեցւոյս զբասնեակը շաբթուան վեց օրերուն, զոհացում տալով կատարուած որեւէ խնդանքին, որուն ջանքերով եւ հմտութեամբ զբասնեակային աշխատութիւնները վերածուեցան պաշտօնական ձեւի եւ ստացան կատարել կանոնաւորութիւն: Իր ջանքերով նաեւ կարելի եղաւ կատարել զանձուկներ թեթեւցնելով մեր բերը:

ԵԿԵՂԵՑՈՒՅՆ ՆԵՐՔԻՆ ԲԱՐԵՁԱՐԴՈՒՄ

Խորհուրդոյս եւ հոգեւոր հովիւին ջանքերով այս շրջանի վերջաւորութեան կարելի դարձաւ Տաճարիս ներքնամասի ամբողջական ներկումն ու բարեգարդումը, ինչպէս նաեւ Մարի անուկեան Սրահը, որոնք դիմաւորուեցան ու արժանացան բարձր զնահամանքի:

ԽՈՐՀՈՒՐԴՈՅՍ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՄԲ ԿԱՏԱՐՈՒԱԾ ԶԵՌՆԱՐԿՆԵՐ

Այս շրջանին ծխական Խորհուրդոյս կազմակերպութեամբ տեղի ունեցան Ապրիլ 24 ի յիշատակի հանդիսութիւն ուղղակի Եկեղեցւով մէջ: Ներսէս Ենորհալի Հայրապետի 800ամեակին նիւիրուած հանդիսութիւն մը նոյնպէս Եկեղեցւոյս խնկարոյր կամարներուն ներքեւ: Եկեղեցւոյս Օծման Յրդ տարեդարձի հանդիսութիւններ եւ Կոմիտաս Կարաց Խսուս հիմնարկութեան 15րդ տարեդարձի հանդիսութիւնները որոնք տեղի ունեցան Յունւարի 20-ին բարձր ներկայութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի, յարանուանութեանց եւ քոյր Միութեանց ներկայացուցիչներու:

ՏԱՐԵԿԱՆ ՊԱՏԳԱՄԱԽՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Այս տարուան Պատգամաւորական ժողովին որ տեղի ունեցաւ Մայիսի 4-6 օրերուն Ուստրի Ս. Փրկիչ Հայց. Եկեղեցւոյ մէջ, յանուն Եկեղեցւոյս ներկայ եղան Տորթ. Արշաւոր Կէօնմեան որ միանգամայն անդամ է Թեմական Խորհուրդի, Ատենապետ Պրն. Լ. Գործեան ընկերակցութեամբ ասե նաղպիր Պրն. Ա. Առաքելեանի

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԵԿԵՂԵՑՈՒՅՍ ԵՆԹԱԿԱՑ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Այս տարեշրջանին եւս ծխ. Խորհուրդս ջանաց Մարմիններու եւ Յանձնախումբերու հետ կապը միշտ սերտ պահել եւ իւրաքանչիւրին հետ ունեցաւ զատ զատ եւ խմբային հաւաքոյթներ, կատարուելիք աշխատութիւններու եւ ապագայի ծրագիրները միասնաբար ուսումնասիրելու եւ զլուխ հանելու նպատակաւ:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԽՄԲԱՅԻՆ ՀՐԱԺԱՐՈՒՄԸ

Ծխական Խորհուրդոյս յղուած Ապրիլ 24 թուակիր նամակով մը Եկեղեցւոյս Երիտասարդական կազմակերպութիւնը ներկայացուց իրենց խմբային հրաժարականը այն պատրուակով թէ այլեւս չէին կարողանար օգտակար հանդիսանալ: Խորհուրդս հրաւիրեց խնդրոյ առարկայ անձերը հասկնալու համար հրաժարման բուն պատճառները, բայց կարելի չեղաւ վայելել անոնց ներկայութիւնը: Կացութիւնը նամակով պարզուեցաւ Առաջնորդ Սրբազան Հօր: Աւելի վերջ Հոգեւոր հովիւի եւ Խորհուրդոյս ջանքերը նոր կազմ մը մէջտեղ հանելու ցարդ ապարդիւն մնացած են:

ԿԱՏԱՐՈՒԱԾ ԽՈՐՀՐԴԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:


Այս տարեշրջանին Եկեղեցւոյս մէջ կատարուեցան 90 խորհրդակատարութիւններ հաստատելով նոր մրցանիշ մը հետեւեալ համեմատութիւններով. Մկրտութիւն 44 հատ, Հարսանիք 25 եւ Մահազրուութիւն 21 հատ:


ԱԶԳԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԵՐՈՒ ՊԱՐԱԳԱՑ:

Հանրի Պուրասա պողոտային վրայ զանուող հողը որ պիտի փոխանձուէր Հ.Բ.Ը.Մ. մարզարան շինելու համար, կրկին ծախու հանուած է այս վերջնոյն այդ ուղղութեամբ չկարենալ վերջնական որոշումի մը յանգելուն հետեւանքով: Պալով Փարք պողոտայի վրայ զանուող հողամասին արդէն իսկ զնորդ մը զանուած է եւ ձեռնարկուած է առ ու ծախի ձեւակերպութեան 45.000 տոլարի փոխարէն:

Վերջացնել է առաջ մեր տեղեկագիրը շնորհակալութեան խօսք ունինք Գանատայի Առաջնորդական Փոխանորդ Հայր Սուրբին, Հոգեւոր Հովիվին, Դիւանապետին, Եկեղեցւոյց Սարկաւազաց դասուն, Կոմիտաս Կարաց անդամներուն եւ իրենց վարիչին, Ժխական Խորհուրդոյս ենթակայ բոլոր մարմիններու վարչականներուն, ինչպէս նաեւ Հ.Բ.Ը.Մ. Մոնթրէալի Մասնամիւղի եւ իրենց ենթակայ մարմիններու վարչականներուն, Թէքէեան Մշակութային Միութեան եւ իրենց Ռատիօ ժամին, Ռ.Ա.Կուսակցութեան Էօժէն Բաբազեան ակումբի վարչականներուն, Գոլսահայ Միութեան վարչականներուն եւ բոլոր այն անհատներուն, որոնք միշտ զանուեցան մեր կողքին, մեզի հետ, դիւրացնելով մեր դժուարութիւնները եւ սատարելով Հայց. Առաքելական Եկեղեցւոյս բարձրացման :

Շնորհակալութիւններով
ի դիմաց Ժխական Խորհուրդոյ


Ա. Առաքելեան
Ատենադպիր


Ա. Գործեան
Ատենապետ